ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 25.08.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2021/71

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

ՀՀ Կոտայքի մարզի Մեղրաձոր համայնքի ներկայացուցիչ՝ Ա. Սուքիասյանի (լիազորագիր՝ տրված 25.08.2021թ.),

քննելով ՀՀ Կոտայքի մարզի Մեղրաձոր համայնքի (հետայսու նաև՝ Պատվիրատու) գյուղ Մեղրաձորի 7-րդ և 11-րդ փողոցների հեղեղատարների կառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված «ԿՄՄՀ-ԳՀԱՇՁԲ-21/7» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի (հետայսու նաև՝ Ընթացակարգ) շրջանակներում «Վայք Գրուպ» ՍՊԸ-ի կողմից 19.08.2021թ. ներկայացված (20.08.2021թ. վարույթ ընդունված) բողոքը (հետայսու նաև՝ ԳԲՔԱ-ՆԳ-2021/71 բողոք), պարզեցի հետևյալը.

1. <u>«Վայք Գրուպ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.</u>

«Վայք Գրուպ» ՍՊԸ-ն (հետայսու նաև՝ Ընկերություն) 19.08.2021թ. Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«Գործի հակիրճ նկարագրությունը և բողոքի փաստերը.

Մեղրաձորի համայնքապետարանի /այսուհետև նաև՝ Պատվիրատու/ կարիքների համար՝ հայտարարվել է «ԿՄՄՀ-ԳՀԱՇՁԲ-21/7» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ /այսուհետև նաև՝ Ընթացակարգ/:

Վերը նշված ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացրել նաև «Վայք գրուպ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի 10.08.2021թ. տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրության 8-րդ կետի համաձայն՝ հանձնաժողովը որոշել է, որ Ընթացակարգի հաղթող /ընտրված/ մասնակից է ճանաչվում «Մինասյաններ Շին» ՍՊԸ-ն:

Այնուհետև www.gnumner.am կայքում 11.08.2021թ. հրապարակված տեղեկատվության համաձայն տեղեկանում ենք, որ Ընթացակարգի ընտրված մասնակցի հետ կկնքվի պայմանագիր անգործության համար սահմանված 5 օրացուցային օր հետո /այսինքն 12.08.2021 մինչև 16.08/2021թթ. ներառյալ/:

Բողոքի իրավական հիմքերը և հիմնավորումները.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Օրենքի 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ սույն օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքի քննության արդյունքներով ընդունված որոշման՝ ուժի մեջ մտնելու օրը:

Ինչպես արդեն նշել ենք, Մեղրաձորի համայնքապետարանի /այսուհետև նաև՝ Պատվիրատու/ կարիքների համար՝ հայտարարվել է «ԿՄՄՀ-ԳՀԱՇՁԲ-21/7» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցության հայտ է ներկայացրել նաև «Վայք գրուպ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի 10.08.2021թ. տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրության 8-րդ կետի համաձայն՝ հանձնաժողովը որոշել է, որ Ընթացակարգի հաղթող /ընտրված/ մասնակից ճանաչել «Մինասյաններ Շին» ՍՊԸ-ին:

Տվյալ պարագայում գնահատող հանձնաժողովը «ԿՄՄՀ-ԳՀԱՇՁԲ-21/7» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովը «Մինասյաններ Շին» ՍՊԸ-ին ճանաչելով Ընթացակարգի ընտրված մասնակից, իսկ այնուհետև հրապարակելով պայմանագիր կնքելու մասին որոշում՝ խախտել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածով երաշխավորված մասնակցության իրավունքի սահմանափակմանը:

Մասնավորապես՝ «Մինասյաններ Շին» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ծավալաթերթ-նախահաշվի արժեքների տոկոսային հանրագումարը՝ չի համընկնում ներկայացված հայտի գնային առաջարկով ներկայացված ընդհանուր գումարի հանրագումարին:

Գնահատող հանձնաժողովի կողմից անտեսվել է վերը նշված փաստական հանգամանքը և որոշում է կայացվել «Մինասյաններ Շին» ՍՊԸ-ի հայտը գնահատել է բավարար, մինչդեռ մասնակցի հայտը չի համապատասխանում Հրավերի պահանջներին:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի «ա» ենթակետի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը իրավունք ունի պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների կամ անգործության վերաբերյալ ընդունելու հետևյալ որոշումները.

ա. արգելելու կատարել որոշակի գործողություններ և ընդունել որոշումներ.

բ. պարտավորեցնելու ընդունել համապատասխան որոշումներ, ներառյալ՝ չկայացած հայտարարելու գնման ընթացակարգը, բացառությամբ պայմանագիրը անվավեր ճանաչելու մասին որոշման:

ԽՆԴՐՈՒՄ ԵՄ՝

Պարտավորեցնել «ԿՄՄՀ-ԳՀԱՇՁԲ-21/7» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել հանձնաժողովի 10.08.2021թ. նիստի թիվ 2 արձանագրության 8-րդ կետով ընդունած որոշումը՝ «Մինասյաններ Շին» ՍՊԸ-ին Ընթացակարգի հաղթող մասնակից ճանաչելու վերաբերյալ:

Պարտավորեցնել «ԿՄՄՀ-ԳՀԱՇՁԲ-21/7» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել պայմանագիր կնքելու մասին որոշումը»:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 25.08.2021թ. ժամը 10:40-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

2. <u>ՀՀ Կոտայքի մարզի Մեղրաձոր համայնքի ներկայացրած փաստերը և հիմնավորումները.</u>

ՀՀ Կոտայքի մարզի Մեղրաձոր համայնքը, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 25.08.2021թ. ժամը 10:40-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով ընդունել է, որ «Մինասյաններ Շին» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ծավալաթերթ-նախահաշիվը չի համապատասխանում Ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին:

Միևնույն ժամանակ խնդրելով՝ գնման հրատապությունից ելնելով, բողոքի վերաբերյալ որոշումը կայացնել հնարավորինս սեղմ ժամկետում:

3<u>. ԳԲՔԱ-ՆԳ-2021/71 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>

ԳԲՔԱ-ՆԳ-2021/71 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ Կոտայքի մարզի Մեղրաձոր համայնքի կողմից գյուղ Մեղրաձորի 7-րդ և 11-րդ փողոցների հեղեղատարների կառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԿՄՄՀ-ԳՀԱՇՁԲ-21/7» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտեր են ներկայացրել «Վայք Գրուպ» ՍՊ և «Մինասյաններ Շին» ՍՊ ընկերությունները:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 05.08.2021թ. նիստի թիվ 2 արձանագրությամբ արձանագրվել է, որ մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերը կազմված են հրավերով սահմանված պահանջներին համապատասխան և որոշվել է վերջիններիս հրավիրել միաժամանակյա բանակցությունների:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 10.08.2021թ. նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ շարունակելով նիստը, միաժամանակյա բանակցության արդյունքներից ելնելով՝ «Մինասյաններ Շին» ՍՊԸ-ին ճանաչել է ընտրված մասնակից:

4. Պատվիրատուի կողմից 11.08.2021թ. տեղեկագրում՝ www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում, հրապարկվել է «ԿՄՄՀ-ԳՀԱՇՁԲ-21/7» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարություն:

5. «Վայք Գրուպ» ՍՊԸ-ն ներկայացված բողոքով վիճարկում է Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի գործողությունները, մասնավորապես՝ «Մինասյաններ Շին» ՍՊԸ-ին Ընթացակարգի ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը, այն պայմաններում, երբ ըստ բողոքաբերի «Մինասյաններ Շին» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ծավալաթերթ-նախահաշվի արժեքների տոկոսային հանրագումարը չի համընկնում ներկայացված հայտի գնային առաջարկով ներկայացված ընդհանուր գումարի հանրագումարին:

<u>4. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով «Վայք Գրուպ» ՍՊԸ-ի 19.08.2021թ. ներկայացված բողոքը, ԳԲՔԱ-ՆԳ-2021/71 բողոքի քննության շրջանակներում Պատվիրատուի կողմից ներկայացված փաստաթղթերը, «ԿՄՄՀ-ԳՀԱՇՁԲ-21/7» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերը, գործով առկա նյութերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 3-րդ ենթակետի ա) պարբերության համաձայն՝ ***հրավերով նախատեսվում է նաև, որ շինարարական ծրագրերի գնման դեպքում մասնակիցը ներկայացնում է նաև իր կողմից հաստատված՝ լրացված ծավալաթերթ-նախահաշիվ՝*** հաշվի առնելով հրավերին կցված ծավալաթերթով ըստ աշխատանքների նախահաշվային բաժինների համար սահմանված առավելագույն կշիռները: Ընդ որում՝ կշիռները կիրառվում են մասնակցի առաջարկած ընդհանուր գնային առաջարկի նկատմամբ, նկատի ունենալով, որ շեղումը չի կարող ավել կամ պակաս լինել հրավերին կցված ծավալաթերթով տվյալ բաժնի համար սահմանված կշռի չափի տասը տոկոսից:...

Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 4-րդ կետի 4.3 ենթակետի 3-րդ պարբերության համաձայն՝ ***մասնակիցը հայտով ներկայացնում է*** շինարարական աշխատանքների գնման դեպքում ***իր կողմից հաստատված՝ լրացված ծավալաթերթ-նախահաշիվ***, հաշվի առնելով սույն հրավերին կցված ծավալաթերթով ըստ աշխատանքների նախահաշվային բաժինների համար սահմանված առավելագույն կշիռները: Ընդ որում կշիռները կիրառվում են մասնակցի կողմից ներկայացված գնային առաջարկի նկատմամբ, նկատի ունենալով, որ շեղումը չի կարող ավել կամ պակաս լինել սույն հրավերին կցված ծավալաթերթով տվյալ բաժնի համար սահմանված կշռի չափի տաս տոկոսից: Աշխատանքների բաժինները չեն կարող արհեստականորեն միավորվել կամ առանձնացվել.

- իր կողմից առաջարկվող՝ սույն հրավերին կցված նախագծային փաստաթղթերով սահմանված տեխնիկական բնութագրերին համապատասխանող սարքերի և սարքավորումների տեխնիկական բնութագրերը, ապրանքային նշանները, ֆիրմային անվանումները, մակնիշները, արտադրողները և երաշխիքային ժամկետները:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ ***հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշում և հայտարարում է ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին:***

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ ***<u>եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ</u>*** ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա ***<u>հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:</u>*** Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված տարբերակը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ ***<u>եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:</u>***

Եվ այսպես, ՀՀ Կոտայքի մարզի Մեղրաձոր համայնքի կողմից գյուղ Մեղրաձորի 7-րդ և 11-րդ փողոցների հեղեղատարների կառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԿՄՄՀ-ԳՀԱՇՁԲ-21/7» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտեր են ներկայացրել «Վայք Գրուպ» ՍՊ և «Մինասյաններ» ՍՊ ընկերությունները:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 05.08.2021թ. նիստի թիվ 2 արձանագրությամբ արձանագրվել է, որ մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերը կազմված են հրավերով սահմանված պահանջներին համապատասխան և որոշվել է վերջիններիս հրավիրել միաժամանակյա բանակցությունների:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 10.08.2021թ. նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ շարունակելով նիստը, միաժամանակյա բանակցության արդյունքներից ելնելով՝ «Մինասյաններ Շին» ՍՊԸ-ին ճանաչել է ընտրված մասնակից:

Պատվիրատուի կողմից 11.08.2021թ. տեղեկագրում՝ www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում, հրապարկվել է «ԿՄՄՀ-ԳՀԱՇՁԲ-21/7» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարություն:

«Վայք Գրուպ» ՍՊԸ-ն ներկայացված բողոքով վիճարկում է Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի գործողությունները, մասնավորապես՝ «Մինասյաններ Շին» ՍՊԸ-ին Ընթացակարգի ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը, այն պայմաններում երբ ըստ բողոքաբերի «Մինասյաններ Շին» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ծավալաթերթ-նախահաշվի արժեքների տոկոսային հանրագումարը չի համընկնում ներկայացված հայտի գնային առաջարկով ներկայացված ընդհանուր գումարի հանրագումարին:

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ ***<u>Ընթացակարգի հրավերի պայմանագրի նախագծի N 1.1 հավելվածով սահմանվել է ծավալաթերթ-նախահաշիվը</u>*** հետևյալ ձևերով.

Ծավալաթերթ-նախահաշիվ
Объемная ведомость-смета

Մեղրաձոր համայնքի գյուղ Մեղրաձորի 7-րդ և 11-րդ փողոցների հեղեղատարի կառուցման աշխատանքներ/Строительство ливневой канализации в улицах 7-й и11-й в село Меградзор Меградзорский общины

NN ը/կ	Աշխատանքների անվանումը Наименование работ	Չափման միավոր Единица измерения	Քանակը Количество	Միավորի արժեքը* (հազ. դրամ)/стоимость единицы* (тыс.драм)	Ընդհանուր արժեքը (հազ. դրամ)/Общая стоимость (тыс.драм)
1	2	3	4	5	6
I	Հողային աշխատանքներ/Земляные работы				
1	10eIVբնահողի (փոսորակ) հանույթ էքս. 1,0մ3 շ.տ. բարձում ա/ի, տեղափոխում 1կմ լցակույտ Разработка и погрузка грунта IV10e экскаватором (1.0 м3) ,перевозка в отвал 1.0км	մ3 м3	296.63	0.89	263.8
2	տեղափոխում 1կմ լցակույտ перевозка в отвал 1.0км	տոն тон	578	0.316	182.9
3	Նույնը ձեռքով, կուտակումով/то же вручную	մ3 м3	31.1	5.76	179.1
4	Հետադարձ լիցք /Обратная засыпка	մ3 м3	190.1	0.88	167.1
	1.Ընդամենը /հազ. դրամ/ 1.Итого /тыс. драм/				792.91
II	Իջատեղեր/Пути				
1	d=530մմ մետ խողովակի ապամոնտաժում, վերադարձ սեփականատիրոջը/Демонтаж	գծ.մ	28	2.310	64.7

	металлической трубы d=530мм, возврат собственику				
2	d=325մմ մետ խողովակի ապամոնտաժում, վերադարձ սեփականատիրոջը/Демонтаж металлической трубы d=325мм, возврат собственику	գծ.մ пм	10	1.663	16.6
				2.Ընդամենը /հազ. դրամ/ 2.Итого /тыс. драм/	81.30
III	Բետոնե ЛРГ6 վաքեր /Бетонные лотки ЛРГ6				
1	Ավազակոպճային շերտ h=10սմ Песчано-гравийный слой h=10см	մ3 м3	31.7	6.198	196.5
2	Հավաքովի ե/բ ЛРГ6 վաքերի տեղադրում-792գծ. մ /Укладка сборых железабетонных лотков ЛРГ6-792 п.м	հատ шт	132	218.256	28809.8
			75	25.231	1892.3
3	Վաքերի ջրամեկուսացում երկշերտ տաք բիտումով Гидроизоляция лотков двухслойным горячим битумом	մ2 м2	1758.2	1.45	2552.6
4	Ավազակոպճային շերտ h=10սմ Песчано-гравийный слой h=10см	մ3 м3	4.0	6.198	24.8
5	Մետաղական d=530մմ խողովակի տեղադրում 1գծ.մ=64.736կգ; δ=5մմ/Монтаж металлических труб d=530мм; 1пм=64.736кг; δ=5мм	գծ.մ	62.0	65.524	4062.5
6	Խողովակի ջրամեկուսացում երկշերտ տաք բիտումով-58.7գծ. մ/Гидроизоляция трубы с двухслойным горячим битумом-58.7п.м	մ2 м2	97.69	2.12	207.0
7	Միացման միաձույլ բետոն (խողովակի և վաքի) B20-Монолитный бетон B20	մ3 м3	2.1	67.219	141.2
8	Հետադարձ լիցք Обратная засыпка	մ3 м3	47.4	1.97	93.5
				3.Ընդամենը /հազ. դրամ/3..Итого /тыс. драм/	37980.11
IV	Մետաղական ցանց վաքերի վրա Металлическая решетка над лотками				
1	Մետաղական ցանց-10հատ Металлическая решетка-10 шт	տոն тон	0.6991	320.1	223.8
	Մետաղական շվելեր N8 швелер N8	գծ.մ пм	20	7.288	145.8
	Մետաղական շվելեր N6.5 швелер N6.5	գծ.մ пм	94.6	6.10	577.0
				4.Ընդամենը /հազ. դրամ/ 4.Итого /тыс. драм/	946.59
	Ընդհանուրը . (հազ.դրամ)* Всего по пункам (тыс. драм)*				39800.9

*Միավորի արժեքը ներառում է բոլոր ծախսերը/*Стоимость единицы включает все расходы

Ծավալաթերթ-նախահաշիվ
Объемная ведомость-смета

Մեղրաձոր համայնքի գյուղ Մեղրաձորի 7-րդ և 11-րդ փողոցների հեղեղատարի կառուցման աշխատանքներ/Строительство ливневой канализации в улицах 7-й и11-й в село Меградзор Меградзорский общины

NN ը/կ	Աշխատանքների անվանումը Наименование работ	Չափման միավոր Единица измерения	Քանակը Количество	Միավորի արժեքը* (հազ. դրամ)/стоимость единицы* (тыс.драм)	Ընդհանուր արժեքը (հազ. դրամ)/Общая стоимость (тыс.драм)
1	2	3	4	5	6
I	**Հողային աշխատանքներ/Земляные работы**				
1	10eIVբնահողի (փոսորակ) հանույթ էքս. 1,0մ3 շ.տ. բարձում ա/ի, տեղափոխում 1կմ լցակույտ Разработка и погрузка грунта IV10е экскаватором (1.0 м3) ,перевозка в отвал 1.0км	մ3 м3	296.63		
2	տեղափոխում 1կմ լցակույտ перевозка в отвал 1.0км	տոն тон	578		
3	Նույնը ձեռքով, կուտակումով/то же вручную	մ3 м3	31.1		
4	Հետադարձ լիցք /Обратная засыпка	մ3 м3	190.1		
				1.Ընդամենը /%/ 1.Итого /%/	**1.99**
II	**Իջատեղեր/Пути**				
1	d=530մմ մետ խողովակի ապամոնտաժում, վերադարձ սեփականատիրոջը/Демонтаж металлической трубы d=530мм, возврат собственику	գ.մ	28		
2	d=325մմ մետ խողովակի ապամոնտաժում, վերադարձ սեփականատիրոջը/Демонтаж металлической трубы d=325мм, возврат собственику	գ.մ пм	10		
				2.Ընդամենը/%/ 2.Итого /%/	**0.20**
III	**Բետոնե ԼՐԳ6 վաքեր /Бетонные лотки ЛРГ6**				
1	Ավազակոպճային շերտ h=10սմ Песчано-гравийный слой h=10см	մ3 м3	31.7		

2	Հավաքովի ե/բ ЛРГ6 վաքերի տեղադրում-792գծ. մ /Укладка сборых железабетонных лотков ЛРГ6-792 п.м	հատ шт	132		
			75		
3	Վաքերի ջրամեկուսացում երկշերտ տաք բիտումով Гидроизоляция лотков двухслойным горячим битумом	մ2 м2	1758.2		
4	Ավազակոպճային շերտ h=10սմ Песчано-гравийный слой h=10см	մ3 м3	4.0		
5	Մետաղական d=530մմ խողովակի տեղադրում 1գծ.մ=64.736կգ; δ=5մմ/Монтаж металлических труб d=530мм; 1пм=64.736кг; δ=5мм	գծ.մ	62.0		
6	Խողովակի ջրամեկուսացում երկշերտ տաք բիտումով-58.7գծ. մ/Гидроизоляция трубы с двухслойным горячим битумом-58.7п.м	մ2 м2	97.69		
7	Միացման միաձույլ բետոն (խողովակի և վաքի) B20-Монолитный бетон B20	մ3 м3	2.1		
8	Հետադարձ լիցք Обратная засыпка	մ3 м3	47.4		
	3.Ընդամենը/%/3..Итого /%/				**95.43**
IV	**Մետաղական ցանց վաքերի վրա Металлическая решетка над лотками**				
1	Մետաղական ցանց-10հատ Металлическая решетка-10 шт	տոն тон	0.6991		
	Մետաղական շվելեր N8 швелер N8	գծ.մ пм	20		
	Մետաղական շվելեր N6.5 швелер N6.5	գծ.մ пм	94.6		
	4.Ընդամենը /%/ 4.Итого/%/				**2.38**
	Ընդհանուրը /%/* Всего по пункам/%/*				**100.0**

*Միավորի արժեքը ներառում է բոլոր ծախսերը/*Стоимость единицы включает все расходы

«Մինասյաններ Շին» ՍՊԸ-ի կողմից ծավալաթերթ-նախահաշիվը ներկայացվել է հետևյալ տեսքով.

Ծավալաթերթ-նախահաշիվ

Объемная ведомость-смета

Մեղրաձոր համայնքի գյուղ Մեղրաձորի 7-րդ և 11-րդ փողոցների հեղեղատարի կառուցման աշխատանքներ/Строительство ливневой канализации в улицах 7-й и11-й в село Меградзор Меградзорский общины

NN ը/կ	Աշխատանքների անվանումը Наименование работ	Չափման միավոր Единица измерения	Քանակը Количество	Միավորի արժեքը* (հազ. դրամ)/стоимость единицы* (тыс.драм)	Ընդհանուր արժեքը (հազ.դրամ)/Общая стоимость (тыс.драм)
1	2	3	4	5	6
I	**Հողային աշխատանքներ/Земляные работы**				
1	10eIVբնահողի (փոսորակ) հանույթ էքս. 1,0մ3 շ.տ. բարձում ա/ի. տեղափոխում 1կմ լցակույտ Разработка и погрузка грунта IV10e экскаватором (1.0 м3) перевозка в отвал 1.0км	մ3 м3	296,63	0,60	177,978
2	տեղափոխում 1կմ լցակույտ перевозка в отвал 1.0км	տոն тон	578	0,200	115,686
3	Նույնը ձեռքով, կուտակումով/то же вручную	մ3 м3	31,1	4,00	124,400
4	Հետադարձ լիցք /Обратная засыпка	մ3 м3	190,1	0,85	162,345
					580,409
				1.Ընդամենը /%/ 1.Итого /%/	**1,99**
II	**Իջատեղեր/Пути**				
1	d=530մմ մետ խողովակի ապամոնտաժում, վերադարձ սեփականատիրոջը/Демонтаж металлической трубы d=530мм, возврат собственику	գծ.մ	28	1,752	49,0560
2	d=325մմ մետ խողովակի ապամոնտաժում, վերադարձ սեփականատիրոջը/Демонтаж металлической трубы d=325мм, возврат собственику	գծ.մ пм	10	0,928	9,2800
					58,336
				2.Ընդամենը/%/ 2.Итого /%/	**0,20**
III	**Բետոնե ЛРГ6 վաքեր /Бетонные лотки ЛРГ6**				
1	Ավազակոպճային շերտ h=10սմ Песчано-гравийный слой h=10см	մ3 м3	31,7	5,000	158,500
2	Հավաքովի ե/բ ЛРГ6 վաքերի տեղադրում-792գծ.մ /Укладка сборых железабетонных лотков ЛРГ6-792 п.м	հատ шт	132	150,000	19800,000
			75	20,000	1500,000
3	Վաքերի ջրամեկուսացում երկշերտ տաք բիտումով Гидроизоляция лотков двухслойным горячим битумом	մ2 м2	1758,2	1,45	2549,390
4	Ավազակոպճային շերտ h=10սմ Песчано-гравийный слой h=10см	մ3 м3	4,0	6,196	24,784
5	Մետաղական d=530մմ խողովակի տեղադրում 1գծ.մ=64.736կգ; δ=5մմ/Монтаж металлических труб d=530мм; 1пм=64.736кг; δ=5мм	գծ.մ	62,0	54,144	3356,928
6	Խողովակի ջրամեկուսացում երկշերտ տաք բիտումով-	մ2	97,69	2,12	206,977

7	Միացման միաձույլ բետոն (խողովակի և վաքի) B20- Монолитный бетон B20	մ3 м3	2,1	67,219	141,160
8	Հետադարձ լիցք Обратная засыпка	մ3 м3	47,4	1,97	93,378
					27831,117
				3.Ընդամենը/%/ 3..Итого /%/	**95,43**
IV	**Մետաղական ցանց վաքերի վրա Металлическая решетка над лотками**				
1	Մետաղական ցանց-10հատ Металлическая решетка-10 шт	տոն тон	0,6991	250,001	174,786
	Մետաղական շվելեր N8 швелер N8	գծ.մ пм	20	6,107	122,140
	Մետաղական շվելեր N6.5 швелер N6.5	գծ.մ пм	94,6	4,22	399,212
					696,138
				4.Ընդամենը /%/ 4.Итого/%/	**2,38**
	Ընդամենը				**29166,000**
	ԱԱՀ 20%				**5833,200**
	Ընդամենը				**34999,200**

Այսպիսով՝ «Մինասյաններ Շին» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ծավալաթերթ-նախահաշվի և Ընթացակարգի հրավերի պայմանագրի նախագծի N 1.1 հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշիվների ուսումնասիրության և համադրության արդյունքում պարզ է դառնում, որ Ընկերության հայտով ներկայացված ծավալաթերթ-նախահաշիվը կազմված է Ընթացակարգի հրավերի պահանջներին անհամապատասխան, մասնավորապես՝ Ընթացակարգի հրավերով ԱԱՀ-ն առանձին տողով նախատեսված չէ, այսինքն՝ առավելագույն կշիռները սահմանվել են ըստ աշխատանքների նախահաշվային բաժինների՝ առանց ԱԱՀ-ի առանձին տողի, մինչդեռ Ընկերությունն իր կողմից ներկայացված ծավալաթերթ-նախահաշվում առանձին տողով նախատեսել է ԱԱՀ, որպիսի պայմաններում Ընկերության կողմից ներկայացված ծավալաթերթ-նախահաշվում առաջանում է անհամապատասխանություն աշխատանքների բաժինների համար սահմանված կշիռների նկատմամբ՝ առաջացնելով նաև անհամապատասխանություն Ընթացակարգի շրջանակներում հայտով Ընկերության առաջարկած ընդհանուր գնային առաջարկի՝ 34 999 200 ՀՀ դրամ գումարի նկատմամբ:

Վերոգրյալով պայմանավորված գտնում եմ, որ գնահատող հանձնաժողովը՝ Ընթացակարգի ընտրված մասնակից ճանաչելով «Մինասյաններ Շին» ՍՊԸ-ին, գործել է ոչ իրավաչափ:

Այսպիսով՝ նման խախտումներով իրականացված գործողությունների արդյունքում գտնում եմ, որ պետք է դադարեցնել «Մինասյաններ Շին» ՍՊԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը և կիրառել ***Կարգի 41-րդ կետով սահմանված պահանջը, այն է՝*** եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում ***արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ,*** ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ***ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:***

Վերը նշված փաստական հանգամանքներով պայմանավորված գտնում եմ, որ Ընկերության բողոքը հիմնավոր է և ենթակա է բավարարման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«Վայք Գրուպ» ՍՊԸ-ի 19.08.2021թ. ներկայացված բողոքը բավարարել՝ պարտավորեցնել «ԿՄՄՀ-ԳՀԱՇՁԲ-21/7» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին՝

1. դադարեցնել հանձնաժողովի 10.08.2021թ. նիստի թիվ 2 արձանագրության 8-րդ կետով ընդունած որոշումը՝ «Մինասյաններ Շին» ՍՊԸ-ին Ընթացակարգի հաղթող մասնակից ճանաչելու վերաբերյալ:
2. դադարեցնել պայմանագիր կնքելու մասին որոշումը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**